ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N-------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ Հ.58 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևանի քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 6-րդ հարկի հ.58 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Արկադի Վլասյանին, Գայանե Բաղդասարյանին, Գևորգ Վլասյանին, Մարիամ Վլասյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ Հ.58 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում /բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի/ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ.682 որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն՝ նախատեսվում է Երևան քաղաքում 2011 թվականին քանդել 4-րդ կարգի վթարային Շինարարների փողոցի հ.15 շենքն ամբողջությամբ։

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշումը Շինարարների փողոցի հ.15 քանդման ենթակա շենքի 34 բնակարաններից 30-ի վերաբերյալ կայացվել են Երևանի քաղաքապետի որոշումներ՝ բնակարաններ հատկացնելու մասին։

Արկադի Վլասյանի ընտանիքի վերաբերյալ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու որոշում, քանի որ վերոհիշյալ ընտանիքների մասով որոշմամբ հաստատված կարգի համաձայն Երևանի քաղաքապետարանի տնօրինությանը փոխանցված պետության միջոցներով կառուցված բնակարանների քանակը և կառուցվածքը հնարավորություն չի տալիս ապահովելու ներքոհիշյալ ընտանիքի վերաբնակեցումը։ Ելնելով շենքի շտապ քանդման անհրաժեշտությունից բնակարանների ամրակցումը կատարվում է Երևան համայնքի միջոցներով Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքից։

Շինարարների փողոցի հ.15 շենքի հ.23 երեք սենյականոց բնակարանի մի մասի՝ 54.5քմ մակերեսով ազատված բնակարանը հետագա քայքայումից պահպանելու համար, Երևանի Աջափնյակ համայնքի «Շ և ՇՇ» ՓԲԸ կողմից 1999 թվականի հունիսի 8-ին տրված կարգադրության համաձայն որպես խորդանոց հատկացվել է Արկադի Վլասյանի ընտանիքին, որը ներկայումս բաղկացած է չորս անձից։ Արկադի Վլասյանի ընտանիքը 2000 թվականից փաստացի հաշվառված բնակվել է վերը նշված բնակարանում (հիմք 28.05.2011թ. «Լենինգրադյան 48/1» համատիրության կողմից տրված հ.130 տեղեկանք)։ Ընտանիքի կազմը՝ Արկադի Վլասյան, Գայանե Բաղդասարյան, Գևորգ Վլասյան, Մարիամ Վլասյան։

«Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի հ.58 բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ Հ.58 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի հ.58 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի հ.58 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ